վրա: Հակառակ դեպքում, երբ դատարանը փոխում է հայցվորի վկայակոչած և ենթադրաբար կիրառման ենթակա նորմերը, դուրս է գալիս հայցի իրավական հիմքի շրջանակից (տե՛ս, թիվ ԵԿԴ/2924/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.10.2013թ. որոշումը):

Արդյունքում, նկատի ունենալով, որ Դատարանը կաշկանդված է հայցը քննել ներկայացված հիմքի և առարկայի շրջանակներում, Դատարանն արձանագրում է, որ այն պայմաններում, երբ Դատարանը հետևությունների է ելել այն մասին, որ Պայմանագրի միակողմանի լուծումը եղել է իրավաչափ, իսկ քննարկվող մասով հայցի հիմքում բացառապես նշված է այն, որ վիճարկվող որոշումը ենթակա է անվավեր ճանաչման, քանի որ դրա կայացման համար հիմք է ընդունվել Պայմանագրի միակողմանի լուծումը, Դատարանը գտնում է, որ բացակայում է վիճարկվող որոշումն անվավեր ճանաչելու հիմքը, քանի որ Պայմանագրի միակողմանի լուծումը ենթակա չէ անվավեր ճանաչման:

Վերոգրյալի հիման վրա՝ Դատարանը գտնում է, որ հայցը ենթակա է մերժման:

Միաժամանակ, Դատարանն անդրադառնալով գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման հարցին, գտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոգրյալի հիման վրա և նկատի ունենալով, որ հայցը ենթակա է մերժման, իսկ Հայցվորի կողմից անհրաժեշտ չափով պետական տուրքի գումարը վճարվել է, Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածով, Դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

Հայցը մերժել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի

հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝

Տ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IE54-BC59-4DFE-8D0B հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am